ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է

«ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ 30 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ՝

նվիրված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 30-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ գիտնականներ, փորձագետներ, ուսանողներ, պետական գերատեսչությունների և գործարար ոլորտի ներկայացուցիչներ

Սիրով հրավիրում ենք ձեզ՝ մասնակցելու «Հանրային կառավարման արդի 30 հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովին, որը տեղի կունենա 2024 թվականի մայիսի 22-24-ը:

Ժամանակակից աշխարհն առաջադրում է պետական կառավարման նոր խնդիրներ, որոնք պայմանավորված են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների (տեխնոլոգիական, սոցիալական, ժողովրդագրական, կլիմայական փոփոխությունների և այլն) էական կերպափոխումներով: Երկրները բախվում են պետական կառավարման արդիականացման, արդյունավետության և արդյունքայնության բարձրացման աննախադեպ մարտահրավերների, որոնք պահանջում են պետական կառավարման ոլորտում մոտեցումների, սկզբունքների և գործիքակազմի վերանայում, պետական կառավարման գործընթացների նկատմամբ վստահության մակարդակի աճ, տարբեր ուղղություններով վերափոխումների նոր ուղենիշներ: Մասնավորապես, սոցիալ-տնտեսական փոփոխությունների սրընթացությունն անխուսափելի է դարձնում պետական կառավարման թվային վերափոխումը և նոր տեխնոլոգիաների կիրառումը արդյունավետության, թափանցիկության և վստահելիության բարձրացման նպատակով:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի 30-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովը փորձելու է անկաշկանդ գիտական քննարկման հարթակ տրամադրել պետական կառավարման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով զբաղվող փորձառու և սկսնակ գիտնականներին, միջազգային փորձագետներին, ինչպես նաև պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներին՝ ոլորտի արդի հիմնախնդիրները վերլուծելու, լուծման ուղիները համատեղ ջանքերով որոնելու համար:

Գիտաժողովի մասնակիցների քննարկմանն ենք առաջարկում ստորև ներկայացվող ***հանրային կառավարման 30 հիմնախնդիր՝*** ըստ հինգ հիմնական գիտական ուղղությունների և աշխատանքային խմբերի.

ԱԽ 1. Հանրային կառավարում

1. Հանրային կառավարման բարեփոխումների ժամանակակից միտումներն ու նոր հայեցակարգային մոտեցումների անհրաժեշտությունը
2. Արհեստական բանականության կիրառման և թվային վերափոխման հիմնախնդիրները հանրային կառավարման համակարգում
3. Կադրային քաղաքականության արդի հիմնախնդիրները հանրային ծառայության համակարգում
4. Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները և համայնքների խոշորացման հիմնախնդիրները
5. Պետական պարտքի կառավարման, կենսաթոշակային բարեփոխումների և ժողովրդագրական արդի հիմնախնդիրները
6. «Ֆինանսական ուտոպիա». անկանխիկ դրամաշրջանառությունն ու կրիպտոարժույթները հանրային ֆինանսների համակարգում

ԱԽ 2. Տնտեսագիտություն և գործարարություն

7. Կազմակերպությունների մրցունակության մարտահրավերները թվային վերափոխման պայմաններում
8. «Սառը պատերազմի ուրվականը» և աշխարհատնտեսական արդի զարգա-ցումները
9. Գլոբալիզացիայի և սլոուբալիզացիայի հիմնախնդիրները նորամուծական, ներդրումային և առևտրային հարաբերություններում
10. Տնտեսական աճի և կայուն զարգացման մարտահրավերները
11. Բանկային համակարգի թվայնացման հիմնախնդիրները
12. Մարդկային ռեսուրսների կառավարման կատարելագործման հիմնախնդիրները թվայնացման դարաշրջանում

ԱԽ 3. Կառավարման հոգեբանություն

13. Անձը կառավարման արդի համակարգերում
14. Փափուկ հմտությունների ուսուցման և զարգացման հիմնահարցերը նոր ժամանակներում
15. Սոցիալ-հոգեբանական արդի հիմնահարցերը կառավարման համատեքստում
16. Անձի մասնագիտական զարգացման (կարիերային առաջընթաց) հոգեբանական հիմնահարցերը
17. Ստեղծարար կառավարման հոգեբանական հիմնահարցերը
18. Կառավարման հոգեբանության և այլ գիտակարգերի հարաբերակցության խնդիրները արդի ժամանակներում

ԱԽ 4. Քաղաքագիտություն

19. Հանրային քաղաքականության ժողովրդավարացման հիմնախնդիրները գլոբալացման պայմաններում
20. Քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ գործառնման հրամայականներն աշխարհում և Հայաստանում
21. Հայաստանի Հանրապետության անվտանգության հայեցակարգի բնականոն արդիականացման հիմնախնդիրները
22. Երիտասարդության քաղաքական սոցիալականացման առանձնահատկությունները ցանցային կառավարման պայմաններում
23. Ազգային ինքնության բնականոն արդիականացման և քաղաքացիական մշակույթի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում

ԱԽ 5. Իրավագիտություն

24. Իրավունքի գերակայության և օրինականության ապահովման արդի հիմնախնդիրները
25. Հանրային ծառայության բարեվարքության համակարգի բարելավման արդի հիմնախնդիրները
26. Մարդու իրավունքները հակամարտությունների համատեքստում
27. Ընտրական իրավունքի իրացման արդի հիմնախնդիրները
28. Սահմանադրականության ապահովման արդի մարտահրավերները
29. Պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման արդի հիմնախնդիրները
30. Էլեկտրոնային կառավարման ներդրման իրավական հիմնախնդիրները

Գիտաժողովին ներկայացվող նյութերը կարող են չսահմանափակվել նշված հիմնախնդիրներով, սակայն պետք է համապատասխանեն նշված գիտական ուղղություններին և գիտաժողովի խորագրին: Գիտաժողովն անցկացվելու է ինչպես պլենար զեկուցումների, այնպես էլ պանելային քննարկումների ձևաչափերով, որոնց համար առաջարկվում են հետևյալ խորագրերը՝

- ✓ Հանրային կառավարման բարեփոխումները թվայնացման դարաշրջանում (ԱԽ 1)
- ✓ Կազմակերպությունների գործունեության և կառավարման մոտեցումների վերաիմաստավորումը ժամանակակից աշխարհում (ԱԽ 2)
- ✓ Ժամանակակից կառավարման հոգեբանության գործնական ուղղությունները. գիտություն և պրակտիկա (ԱԽ 3)
- ✓ Հանրային քաղաքականության և աշխարհաքաղաքականության արդի հիմնախնդիրները (ԱԽ 4)
- ✓ Իրավունքի զարգացման և սահմանադրականության ապահովման արդի մարտահրավերները (ԱԽ 5):

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Տեխ. գիտ. թեկ., դոցենտ Խ. ՂԱԶԵՅԱՆ
ՀՀ ՊԿԱ ռեկտոր (նախագահ)
Տնտ. գիտ. թեկ., դոցենտ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ՊԿԱ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր
Քաղ. գիտ. դոկ., պրոֆեսոր Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հոգ. գիտ. թեկ., դոցենտ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՀ ՊԿԱ հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ
Տնտ. գիտ. թեկ., դոցենտ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ
Իրավ. գիտ. թեկ., դոցենտ Թ. ՇԱՔԱՐՅԱՆ
ՀՀ ՊԿԱ իրավագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գիտաժողովի նյութերի ներկայացման և փորձաքննության հաջորդականությունը	Վերջնաժամկետ
Զեկույցների վերնագրերի և համառոտագրերի ներկայացում *(ըստ կից ներկայացվող ձևաչափի)*	**Մարտի 1, 2024 թ.**
Զեկույցների վերնագրերի և համառոտագրերի ընդունման հաստատում	Մարտի 15, 2024 թ.
Զեկույցների (հոդվածների) ամբողջական տեքստերի ներկայացում	**Ապրիլի 25, 2024 թ.**
Նյութերի գրախոսության արդյունքների մասին իրազեկում հեղինակներին	Մայիսի 10, 2024 թ.
Գիտաժողովի ծրագրի առաքում մասնակիցներին	Մայիսի 15, 2024 թ
Գիտաժողովի լիագումար նիստ, պլենար զեկուցումներ	**Մայիսի 22, 2024 թ.**
Պանելային քննարկումներ	**Մայիսի 23, 2024 թ.**
Գիտաժողովի նյութերի հրապարակում	**Մինչև հուլիսի 30, 2024 թ.**

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Զեկույցները (հոդվածները) պետք է ներկայացվեն հայերեն (շարված GHEA Grapalat տառատեսակով), անգլերեն կամ ռուսերեն (Arial տառատեսակով), 11 տառաչափով, 1 միջտողային հեռավորությամբ, A5 ձևաչափի թղթի վրա՝ եզրերից թողնելով 1-ական սմ հեռավորություն: Գիտաժողովին ներկայացվող նյութերի ծավալը չպետք է գերազանցի 20000 նիշը՝ բացատներով:

Գիտաժողովի նյութերը տպագրվելու են ***Հանրային կառավարում*** գիտական հանդեսի հատուկ թողարկմամբ (որն ընդունելի է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից՝ ատենախոսությունների հիմնական արդյունքները և դրույթները հրապարակելու համար), ուստի, պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) նախ պետք է նշել ՀՏԴ-ն՝ համընդհանուր տասնորդական դասիչը (տե՛ս **http://www.udcsummary.info/php/index.php?tag=1&lang=hy** հղումը),

2) հաջորդ տողում՝ հեղինակ(ներ)ի անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը ամբողջությամբ (գլխատառերով),

3) յուրաքանչյուր հեղինակի աշխատավայրի՝ կազմակերպության ամբողջական անվանումը,

4) յուրաքանչյուր հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը,

5) 2 տող ներքև գրվում է բնագրի վերնագիրը (գլխատառերով),

6) վերնագրից հետո գրվում է ամփոփագիրը բնագրի լեզվով՝ 150-250 բառ և բանալի բառերը՝ 5-7 բառ,

7) ամփոփագրին հաջորդում է բնագիրը,

8) օգտագործված աղբյուրների և գրականության հղումները համարակալվում են՝ ըստ տեքստում, աղյուսակներում և նկարներում մեջբերումների հաջորդականության: Գրվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով: Եթե հղման աղբյուրը մեկ անգամից ավելի է օգտագործվում հոդվածում, ապա այդ համարի կողքին նշվում է հղման էջ(եր)ը: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ՝ [1], [2, с. 11-12],

9) ներկայացված նյութերի **ենթատողային մեկնաբանությունները** կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով,

10) տպագրության ներկայացված **նկարները, գծապատկերները, աղյուսակները** և այլ պատկերները պետք է հստակ և հաջորդաբար համարակալվեն արաբական թվերով և ներկայացվեն էլեկտրոնային տարբերակով՝ ներմուծված հոդվածի մեջ MS Office Word (ԷՄԷՍ Օֆֆիս Վորդ) ծրագրում իբրև նկարներ (paste special/as picture) և Excel (Էքսել)) տարբերակով (գծապատկերների և այլ դեպքերում), նկարների հղումները բերվում են հապավումով (օրինակ՝ «տե՛ս Գծապատկեր 8» կամ «ինչպես հետևում է Աղյուսակ 4-ից»), գունավոր նկարներ և գծապատկերներ չեն ընդունվում,

11) նկարների, գծապատկերների և աղյուսակների լայնությունը՝ մինչև 125 մմ,

12) բոլոր նկարները, գծապատկերները և աղյուսակները պետք է ունենան անվանումներ: Աղյուսակի վերնագիրը գրվում է աղյուսակի վերևում, իսկ նկարներինը կամ գծապատկերներինը՝ ներքևում,

13) բնագրին հաջորդում է **«ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ»** ցանկը, որտեղ տեքստում բերված հաջորդականությամբ ներկայացվում է գրականության ցանկը՝ 11 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ թավ (Bold)

և շեղ (Italic), հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը և ընդհանուր էջերի թիվը: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու աշխատանքի վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի և/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը, իսկ օբյեկտի թվային նույնականացման կոդ (DOI) ունեցող հոդվածների դեպքում՝ նաև DOI-ները: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում նշվում են հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, աշխատանքի վերնագիրը, համացանցային հասցեն ամբողջությամբ (link-ը), հրապարակման (եթե հայտնի է) և վերջին այցելության ամսաթիվը, ամիսը, տարին,

14) գրականության ցանկից հետո ներկայացվում են մյուս երկու լեզուներով (որոնք տարբերվում են բնագրից) հեղինակային ամփոփագրերը և բանալի բառերը,

15) ամփոփագրերին հաջորդում է ***«Տեղեկություններ հեղինակի մասին»*** հավելվածը: Այն պահանջվում է ներկայացնել աղյուսակի տեսքով՝ երեք լեզվով՝ համաձայն Հավելված 1-ի (Հավելվածը կցվում է նաև Word տարբերակով):

Գիտաժողովի մասնակցության հայտը՝ ըստ ներկայացված ձևաչափի, պետք է ներկայացնել մինչև ***2024 թվականի մարտի 1-ը՝ conference@paara.am*** էլեկտրոնային հասցեին՝ համաձայն ներկայացված ժամանակացույցի (նախ վերնագիրը, համառոտագիրը և բանալի բառերը, և թեմայի հաստատումը ստանալուց հետո միայն՝ զեկույցի (հոդվածի) ամբողջական տեքստը): Գիտաժողովին մասնակցությունը և նյութերի տպագրությունն անվճար են:

Հավելված 1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հեղինակի անուն, հայրանուն, ազգանուն (*առանց կրճատումների*)	
Աշխատանքի վայր (*առանց կրճատումների*), պաշտոն	
Գիտական աստիճան, գիտական կոչում	
Հոդվածի վերնագիր	
ՀՏԴ (Համընդհանուր տասնորդական դասիչ)	
Աշխատանքային հասցե	
Էլ. փոստի հասցե	
Հեռախոսի համար (աշխատանքային, բջջային)	
Հոդվածի ներկայացման օր, ամիս, տարեթիվ	

СВЕДЕНИЯ ОБ АВТОРЕ

Фамилия, имя, отчество автора *(без сокращений)*	
Место работы *(без сокращений)* и должность	
Ученая степень, ученое звание	
Название статьи	
УДК (Универсальная десятичная классификация)	
Рабочий адрес	
Эл. почта	
Телефон рабочий, мобильный	
Дата представления статьи	

INFORMATION ABOUT AUTHOR

The author's given name and surname *(without abbreviations)*	
Institution *(without abbreviations)* and position	
Academic title	
Title of article	
UDC *(Universal Decimal Classification)*	
Institution address	
E-mail	
Phone number (office, mobile)	
Article submission date	